



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻԶԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՄԻՋԵՎ
ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետարանը, ի դեմս մարզպետարան Ռաֆիկ Գրիգորյանի մի կողմից, և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտը, ի դեմս նախագահ պարոն Ժան-Պիեռ Բարբիեի մյուս կողմից, համաձայն 2016թ. Նոյեմբերի 18-ի մշտական հանձնաժողովի որոշման **այսուհետ Գեղարքունիքի մարզպետարանը և Իզերի դեպարտամենտը**

- Հաշվի առնելով Ֆրանսիայի և Հայաստանի Հանրապետությունների միջև բարեկամական և համագործակցային կապերը և այդ շրջանակներում կնքված համագործակցության պայմանագրերը,
- Հաշվի առնելով ժողովրդավարության, Մարդու իրավունքների պաշտպանության, տղամարդկանց և կանանց միջև իրավահավասարության և աշխարհիկության սկզբունքները հարգելու երկու կողմերի պատրաստակամությունը
- Հաշվի առնելով այն հետաքրքրությունը կայուն զարգացման նկատմամբ, որը ենթադրում է ներկա և ապագա սերունդների միջև համաձայնություն և համերաշխություն, սոցիալական հավասարություն և արդարություն, տնտեսական զարգացում, հարգանք շրջակա միջավայրի նկատմամբ, մշակութային բազմազանություն, հիմնվում է ժողովրդավարական ղեկավարման սկզբունքների վրա և սահմանում ապակենտրոնացված համագործակցության դերը և որի ապացույցն է 2012թ. փետվարի 28-ին Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի դեպարտամենտայ նիստում քննարկված «Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի միջազգային հարաբերությունների և ապակենտրոնացված համագործակցության խարտիան»
- Հաշվի առնելով այն շահագրգռվածությունը, որ ցուցաբերում են Իզերի դեպարտամենտը և Գեղարքունիքի մարզպետարանը Կայուն զարգացման նպատակները սեփական քաղաքներում իրականացնելու համար
- Հաշվի առնելով Ֆրանսիայի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների Ընդհանուր օրենսգիրքը և մասնավորապես ապակենտրոնացված

համագործակցությանը վերաբերող 1115-1 և որոշան հարգողովի հրովանդները

- Հաշվի առնելով Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի նախաձեռնությունը համագործակցային արտոնյալ կապեր հաստատել Հայաստանի և մասնավորապես Գեղարքունիքի մարզպետարանի հետ, մասնավորապես 2004թ. հոկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրով և 2010թ. հոկտեմբերի 9-ին կնքված և 2013թ. հոկտեմբերի 4-ին թարմացված համագործակցության պայմանագրերով

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իզերի դեպարտամենտը և Գեղարքունիքի մարզպետարանը իրականացնում են համատեղ ծրագրեր Ռոման-սյուր-Իզեր, Վիեն, Գրենոբլ և նրանց հայկական գործընկերներ Վարդենիս, Գորիս, Սևան քաղաքների հետ IRAPA (Ռոնալպյան խմբավորումների միջհամագործակցությունը Հայաստանի համար) հարթակի շրջանակներում

Ինչպես նաև երկու կողմերի պատրաստակամությունը, իրականացված ուսումնասիրություններն ու մտքերի փոխանակումը մասնավորապես 2015թ. նոյեմբերին Գեղարքունիքի մարզպետարանի կողմից Իզերի դեպարտամենտ կատարած այցի ընթացքում

Ստորագրեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Հոդված 1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզպետարանը և Իզերի դեպարտամենտը ցանկանում են սերտորեն համագործակցել՝ երկխոսությունը, փորձի և հմտությունների փոխանակումը զարգացնելու, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, մշակութային կայուն զարգացմանը նպաստելու համար :

Հոդված 2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Սույն պայմանագրում ամրագրված համագործակցության առանցքները վերաբերում են հետևյալ բնագավառներին

- Ինստիտուցիոնալ փորձի փոխանակում Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև
- Առողջապահական ոլորտի բարելավում և բուժօգնության հասանելիություն Գեղարքունիքի մարզում
- Կայուն տուրիզմի՝ որպես Գեղարքունիքի մարզի կայուն զարգացման գործոնի խթանում
- Ֆրանսերենի ուսուցում և ֆրանսախոսության զարգացում Գեղարքունիքի մարզում
- Մշակութային փորձի փոխանակում Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև
- Ցանկացած այլ բնագավառ, որը կարող է հետագայում զարգացման հավանականություն ունենալ, առանձին կքննարկվի սույն պայմանագիրը ստորագրողների կողմից

Համագործակցությունը կիրականացվի երկրներից յուրաքանչյուրում գործող օրենքների սահմաններում :

Հոդված 3 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՉԱՓԸ

3-1 Նախատեսվող ծրագրերը

Սույն պայմանագրի շրջանակներում համագործակցության նպատակներն իրականացնելու համար երկու կողմերը պարտավորվում են համաձայնեցնել իրենց գործողությունները Հոդված 2-ում նշված բնագավառներում : Կողմերը ցանկանում են

կենտրոնացնել իրենց ջանքերը հետևյալ ծրագրերի իրականացման համար և կապեր հաստատել հետևյալ առանցքների միջև,

- Ինստիտուցիոնալ փորձի փոխանակում Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև, երկու կողմերի իրավասությունների շրջանակներում փորձի և հմտությունների փոխանցում և փոխանակում
- Գեղարքունիքի մարզում բուժօգնության որակական բարելավում և հասանելիություն
 - Մարզում առկա բուժօժանայությունների որակական բարելավում (վերանորոգում և վերազինում) մասնավորապես գյուղական համայնքների բուժկետերում
 - Գեղարքունիքի մարզի մակարդակով բժշկական վերապատրաստումներ և փորձի փոխանակում բուժանձնակազմի համար
- Կայուն տուրիզմի՝ որպես Գեղարքունիքի մարզի կայուն զարգացման գործոնի խթանում
 - Քաղաքների և տուրիզմի բնագավառի դերակատարների հմտությունների ամրապնդում
 - Աջակցություն ցանցի ստեղծմանն ու տուրիզմի բնագավառի համակարգմանը
 - Աջակցություն ընտրված քաղաքների տուրիզմի բնագավառի և վաճառքի ծավալների խթանմանը
- Ֆրանսերենի ուսուցում և ֆրանսախոսության զարգացում Գեղարքունիքի մարզում
 - Ֆրանսերենի ինտնսիվ դասընթացների կազմակերպում դպրոցականների և մեծահասակների համար
 - Ֆրանսերեն լեզվի արժևորում Գեղարքունիքի մարզում, մասնավորապես երիտասարդ ֆրանսախոսների միջոցով
- Մշակութային փորձի փոխանակում Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև
 - Աջակցություն ֆրանսախոս մշակութային միջոցառումներին Գեղարքունիքի մարզում
 - Աջակցություն Հայաստանի հետ առնչություն ունեցող մշակութային միջոցառումներին Իզերում, մասնավորապես սփյուռքի կազմակերպությունների հետ

Այս առանցքների ծրագրերը մանրամասնված են 2016-2018թթ. ծրագրերի՝ Արտաքին գործերի և միջազգային զարգացման նախարարություն ներկայացված հայտում, արժանացել են կողմերի հավանությանը և համաֆինանսավորվել են նախարարության կողմից:

3-2 Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ

Համագործակցության այս ծրագրի նախնական արժեքն է 695 800 € որից 410 000 € կվճարի Իզերի դեպարտամենտը, իսկ 51 600 €՝ Գեղարքունիքի մարզպետարանը պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Երկու կողմերը կփորձեն գտնել համաֆինանսավորման այլ աղբյուրներ :

Հոդված 4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տարբեր կառույցներ (Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի դեպարտամենտի բաժիններ, ՀԿ-ներ, ընկերություններ, ասոցիացիաներ, ապակենտրոնացված պետական կառույցներ և այլն) կմասնակցեն սույն պայմանագրում ամրագրված ծրագրերի իրականացմանը: Վերջիններիս վերահսկողությունը կիրականացվի Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի դեպարտամենտի կողմից:

Համապատասխան կողմի և ընտրված օպերատորի միջև կկնքվի համաձայնագիր, որի մասին հղում կկատարվի:

Հոդված 5 ԳԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ֆրանս-հայկական հանձնախումբը ժողով կհրավիրի ամենտարի: Այն կկազմի աշխատանքային ծրագիրը, կորոշի դրանց իրականացման պայմանները, կգնահատի վերջիններիս իրականացման հնարավորությունները և անրաժեշտության դեպքում շտկումներ կմտցնի:

Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի մասնագետներից, ինչպես նաև վերջիններիս կողմից հրավիրված հավանական դերակատարներից կազմված ֆրանս-հայկական վերահսկող կոմիտեն կնախապատրաստի հանձնախմբի որոշումները: Այն ժողով կհրավիրի առնվազն տարեկան մեկ անգամ:

Այս խորհուրդների քարտուղարությունը կստանձնի հրավիրող համայնքը հետևյալ սկզբունքով.

- Իզերի դեպարտամենտը Ֆրանսիայում ընթացող ժողովների դեպքում
- Գեղարքունիքի մարզպետարանը Հայաստանում ընթացող ժողովների դեպքում

Ֆրանսիական և հայկական մասնագիտական հանձնախմբերը, որոնք կազմված կլինեն յուրաքանչյուրը IRAPA հարթակի անդամ համայնքների ներկայացուցիչներից, ժողով կգումարեն առնվազն եռամսյակը մեկ անգամ Ֆրանսիայում և Հայաստանում՝ այս շրջանակներում նախաձեռնված ծրագրերի վերահսկողությունն ապահովելու նպատակով:

Հոդված 6 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզպետարանը կնպաստի սույն պայմանագրի շրջանակներում նշված ծրագրերի իրականացմանը: Վերջինս Իզերի դեպարտամենտին կներկայացնի համատեղ ծրագրերին, ինչպես նաև դրանց պլանավորմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը, որոնց հիման վրա կիրականացվի երկու կողմերի համագործակցությունը:

Իզերի դեպարտամենտը և Գեղարքունիքի մարզպետարանը կմասնակցեն համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ֆինանսավորմանը և կարող են ներգրավել ֆինանսական միջոցներ Ֆրանսիայի և Հայաստանի Հանրապետությունների և /կամ Եվրամիության կամ միջազգային ցանկացած կառույցից կողմից՝ գործընկեր կողմին տեղյակ պահելուց հետո: Իզերի դեպարտամենտը և Գեղարքունիքի մարզպետարանը կներկայացնեն նման մասնակցությունների տարեկան հաշվետվություն:

Հայկական կողմի այցելությունները Իզերի դեպարտամենտ և ֆրանսիական կողմի բոլոր

համապատասխանաբար Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետարանի
հետ :

Երկու կողմերը պարտավորվում են զարգացնել սույն պայմանագրի շրջանակներում
իրականացվող ծրագրերի վերահսկողության, գնահատման և պարբերական
հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ :

Մասնավորապես, կողմերից յուրաքանչյուրը կկազմի պայմանագրում ամրագրված
բուջեին, կազմակերպչական հարցերին վերաբերող հաշվետվություն:

Հայաստանի իշխանությունները կերաշխավորեն Իզերի դեպարտամենտի
բարձրաստիճան պաշտոնյաների և տեղում աշխատող մասնագետների կյանքի և
ունեցվածքի անվտանգությունը և հակառակը:

Իզերի դեպարտամենտը կհետևի, որպեսզի տեղում աշխատող Իզերի օպերատորները
հարգեն հայկական իշխանությունների կողմից հաստատված կանոնները :

Հոդված 7 ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7-1 Տևողությունը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և երկու երկրների կողմից
վերջինիս վավերացման պահից և գործում է մինչ 2018թ.-ի դեկտեմբերի 31-ը :

7-2 Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կիրառումից կամ իրականացումից առաջացած ցանկացած
տարաձայնություն կլուծվի երկու կողմերի միջև բանակցությունների միջոցով :

Անհամաձայնության կամ պարտավորությունները չկատարելու դեպքում կողմերից
յուրաքանչյուրը պարտավոր է այդ մասին տեղյակ պահել առնվազն 6(վեց) ամիս առաջ՝
ուղարկելով պատվիրված նամակ կամ միջազգային ցանկացած փաստաթուղթ, որը
կունենա նմանատիպ գործառույթ:

Հոդված 8 ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Սույն պայմանագրի պայմանների և իրականացման ձևերի ոչ բովանդակային
փոփոխությունների դեպքում կողմերի միջև կկնքվի համաձայնագիր: Վերջինում
կամրագրվեն փոփոխման ենթակա տարրերը՝ առանց պայմանագրի նպատակի կամ
նպատակների փոփոխության պատճառ հանդիսանալու :

Ամսաթիվ 29.11.2016

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետարան

Ֆրանսիայի Հանրապետության
Իզերի դեպարտամենտ

Մարզպետ
Ռաֆիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նախագահ
Ժան-Պիեռ ԲԱՐԲԵՆ

R. Grigoryan

J. P. Barbey